ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 07

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «18» փետրվարի 2021թ.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ կազմով Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), իրականացնելով 2021 թվականի փետրվարի 15-ին հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ամբողջական նյութերի ուսումնասիրություն, պարզեց, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Սերգեյ Դիմիտրիի Չիչոյանի կողմից 2018 թվականին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2017 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում չի հայտարարագրվել հայտարարագրման ենթակա 42,000 ԱՄՆ դոլարի փոխառության գործարքը, որով խախտվել է «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-172-Ն օրենքի (ուժը կորցրել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին, այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (2017 թվականի հունիսի 9-ի թիվ ՀՕ-98-Ն խմբագրությամբ) պահանջը:

140

2. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ամուսնու գույքի հայտարարագիրը պետք է ներառի նրանց սեփականության իրավունքով պատկանող՝ այն փոխառությունը, որը հայտարարատուն հանձնել է, կամ որը նրան վերադարձվել է հարկային տարում: Սույն օրենքի իմաստով փոխառություն է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ տեսակային հատկանիշներով որոշվող այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով (այսուհետ՝ փոխառություն):

3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

4. Հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը՝ հայտնաբերված խախտման վերաբերյալ 2021 թվականի հունվարի 22-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 03/21 արձանագրությունը:

5. Արձանագրված իրավախախտման վերաբերյալ Սերգեյ Չիչոյանի կողմից ներկայացվել է գրավոր դիրքորոշում, որտեղ Սերգեյ Չիչոյանը վկայակոչելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (ՀՀՊՏ 2011.06.17/37(840) 33-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասը, 247-րդ հոդվածը, եկել է այն եզրահանգման, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա

ընթացքում, տվյալ դեպքում մինչև 2019 թվականի մարտի 31-ը, հետևաբար հարուցված վարչական վարույթը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով ենթակա է կարճման:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա: Վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանող կամ այն ուժեղացնող ակտերը հետադարձ ուժ չունեն: Վարչական իրավախախտումների գործերի վարույթը իրականացվում է իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի (29.03.2018 թվականին գործող խմբագրությամբ) համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

8. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

9. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի

վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

(...)

7) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

10. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի վկայակոչված իրավադրույթների համադրված վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտման համար անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության օրենքով նախատեսված հատուկ ժամկետների ընթացքում, որոնց հաշվարկը սկսվում է այն կատարվելու օրվանից: Վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի պարտականությունն է:

11. Հանձնաժողովն արձանագրում է, որ Սերգեյ Չիչոյանի կողմից «Հայտարարատու պաշտոնատար անձի 2017 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագիրը ներկայացվել է 2018 թվականի մարտի 29-ին, հետևաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված անձին վարչական պատասխանատվության ենթարկելու միամյա ժամկետն ավարտվել է 2019 թվականի մարտի 29-ին:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասով, 247-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2021 թվականի փետրվարի 15-ին հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճել՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ժամկետն անցած լինելու հիմքով:

2. Սույն որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Սերգեյ Դիմիտրիի Չիչոյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

138